




ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ  
ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ



ՏՊԱՐԱԿ  
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՅ  
ՄԵԾԻՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԱՆԹՈՆԻԱ - 2003



ԱՆՈՒԼԻՍ



Սոյն

ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ  
ՄԲՔՅ ՊԱՏԱՐԱԳԻ

Գրքոյիը կը հրատարակուի  
մեկեանստութեամբ՝  
ՊՅՂՈՍԵԱՆ ԸՆԿԱՆՔԻՔԻՆ  
ի յիշատակ

ՄԵԼՔՈՆ ՄԱՐԿՈՍԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ

Յիշատակն արդարոյն  
օրհնութեամբ կղիցի:

## ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամէն:

*ՀԱՅՐ մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո: Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազօրդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն: Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. Ամէն:*

*Զսաղմոսերգութիւնս եւ զաղաչանս ընկալցի մարդասէրն Աստուած ի հաճոյս բարեբար կամաց իւրոց. մեր մեղացն եւ մեր բազում յանցանացն թողութիւն շնորհեսցէ. ի չարեաց փրկեսցէ. ի մեղաց պահեսցէ. եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:*

ՊԱՏԱՐԱԳ

Երգ կգեստաւորման

Դ.Զ.

Յորհուրդ խորին, անհաս անսկիզբըն, որ  
զարդարեցեր զվերին պետութիւնդ, ի յառաջաստ  
անմատոյց լուսոյն, գերապանծ փառօք զդասս  
հրեղինաց:

Անճառահրաչ գորութեամբ ստեղծեր զԱբամ,  
պատկեր տիրական, եւ նազելի փառօք զգեստաւո-  
րեցեր ի դրախտն Ագնի, տեղի բերկրանաց:

Չարչարանօք քո սուրբ Միածնիդ նորոգեցան  
արարածք ամենայն, եւ վերստին մարդն անմահա-  
ցաւ, զարդարեալ ի գգեստ անկողոպտելի:

Բամից բոլորից տիրապէս աստուած պետա-  
կան, նափորտապատ սիրով ըզմեզ գգեստաւորե-  
ցեր, քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր:

Քագաւոր երկնաւոր, զնկեղեցի քո անշա'րժ  
պահեա. եւ զերկրպագուս անուամդ քում պահե-  
ա', ի խաղաղութեան:

Քհնյ. Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնին բա-  
րեխօսութեանն, Տէր, ընկալ զաղաչանս մեր  
եւ կեցո զմեզ:

Սրկ. Սուրբ զԱստուածածնին եւ զամենայն  
սուրբ բարեխօս արասցուք առ Հայր ի յեր-

կինս զի կամեցեալ ողորմեցի եւ զթացեալ  
կեցուցէ զարարածս իւր: Ամենակալ տէր  
Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Քհնյ. Ընկալ, Տէր, զաղաչանս մեր՝ բարեխօսու-  
թեամբ սուրբ աստուածածնին՝ անարատ  
ծնողի Միածնի Որդւոյ քո, եւ աղաչանօք  
ամենայն սրբոյց քոց, եւ աւուրս շնորհիւ:  
Լուր մեզ, տէր, եւ ողորմեա. ներեա, քաւեա  
եւ թող զմեզս մեր: Արժանաւորեա գոհու-  
թեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ  
ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ այպա աւե. Յոստովանիմ առաջի Աստուծոյ  
եւ Սրբուհւոյ Աստուածածնին, եւ առաջի  
ամենայն սրբոց. եւ առաջի ձեր հարք եւ եղբարք,  
զամենայն մեզս զոր գործեալ եմ, քանզի մեղայ  
խորհրդով, բանիւ եւ զործով, եւ ամենայն մեղօք  
զոր գործեն մարդիկ. մեղա՛յ, մեղա՛յ, աղաչեմ  
զձեզ, խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթո-  
ղութիւն:

Ողորմեցի քեզ մարդստերն Աստուած. եւ  
թողութիւն շնորհեցէ ամենայն յանցանաց քոց,  
անցելոյն եւ այժմուս եւ յառաջակայէն փրկես-  
ցէ զքեզ, հաստատեցէ զքեզ ի գործս բարիս,  
եւ հանգուցէ զքեզ ի հանդերձեալ կեանս.  
ամէն:

Քհնյ. Ազատեսցէ, եւ զձեղ մարդասէրն Աստուած, եւ թողցէ զամենայն յանցանս ձեր. տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ դործելոյ զբարիս. ուղղեսցէ եւ զառաջակայ կեանս ձեր շնորհօք Սուրբ Հոգւոյն, հզօրն եւ ողորմածն, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Դպ. Յիշեսչիր եւ զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

Քհնյ. Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

Սաղմոս ԴԹ.

Դպ. Աղաղակեցէ՛ք առ Տէր, ամենայն երկիր, ծառայեցէ՛ք Տեառն ուրախութեամբ:

Մտէ՛ք առաջի նորա ցնծութեամբ, ծաներո՛ւք, զի նա է Տէր Աստուած մեր:

Նա արար ըզմեզ եւ ո՛չ մեք էաք, մեք ժողովուրդք եւ խաչն արօտի նորա:

Մտէ՛ք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, եւ օրհնութեամբ ի յարկս նորա:

Պոստովան եղերո՛ւք Տեառն, եւ օրհնեցէ՛ք զանուն նորա:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Սրկ. Սուրբ Եկեղեցեալս աղաչեսցուք ըզՏէր, զի սովաւ փրկեսցէ ըզմեզ ի մեղաց, եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քհնյ. Ի մէջ տաճարիս եւ առաջի Աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ տեղոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք, զսուրբ, եւ զհրաշալի եւ զյաղթող զՅարութիւնդ քօ օրհնեմք եւ փառաւորեմք, եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քհնյ. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Սրկ. Դատ արա՛ ինձ, Աստուած, եւ իրաւ արա ինձ ի դատաստանի խմում:

Քհնյ. Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ, նենդաւորէ փրկեա՛ զիս:

Սրկ. Դու Աստուած, հզօրիչ իմ ես, ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում զնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Քհնյ. Առաքեա՛, Տէ՛ր, ըզլոյս քօ եւ ըզճշմարտութիւն քօ, զի առաջնորդեսցեն ինձ, եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քօ:

Արկ. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Քննյ. Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած, Աստուած իմ:

Արկ. Արդ, ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա՛ նմա փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Քննյ. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Արկ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն: Եւ եւս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք:

Օրհնեսցո՛ւք զամենակայն Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ արժանի արար ըզմեզ կալ ի տեղւոջս փառաբանութիւն եւ երգել զերգս հոգեւորս: Ամենակալ տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քննյ. Ի յարկի սրբութեան եւ ի տեղւոջս փառաբանութեան. հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս, առաջի Աստուած ծընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ եւ զհրաշալի եւ զյաղթող զՅարութիւնդ քո օրհնեմք եւ փառաւորեմք. եւ քեզ ընդ երկնային զօրսն

մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Վարագոյրը կը քաշուի եւ դպիրները կ'երգեն յաւուր պատշաճի Մեղեդիմ: Եթէ պատարագիչը եպիսկոպոս է կ'երգեն ՂԱտրեալդ:

### ՆՍՏԻ

Ընտրեալդ յԱստուծոյ,  
Ով երջանիկ սուրբ հայրապետ,  
Նրմանեալ Ահարոնի,  
Եւ Մովսէսի մարգարէին:  
Այնմ որ զգեստուցն էր յօրինող,  
Ձոր Ահարոն միշտ ըզգեցող:  
Յօրինէր ըզպատմուճանն,  
Ձոր ի չորից կազմեալ նիւթոց:  
Ի կարմրոյ, ի կապուտոյ,  
Ի բեհեզոյ, ի ծիրանւոյ:  
Թել ըզթելըն յօրինէր.  
Կարգն առաջինն էր կարկեհան:  
Եւ օծումըն գրրապանին,  
Շուրջանակի բոլորաչէն:

## ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Յարեաւ Քրիստոս: Զարթեալ Քրիստոս:

Ով պարտիզպան, դու ասա, ո՞ւր տարան զՅիսուս: Որ կարծեմ թէ դու ես նման, ով նման դու նման:

Մի լար դու, ով կին, ես եմ կենդանին: Եկ եւ տես տեղին զոր խոցեաց ազգն Իսրայէլի: Եկ եւ տես տեղին, զոր խոցեաց ազգն Իսրայէլի:

Յարեալ Քրիստոս: Զարթեալ Քրիստոս:

Մի լար դու ցաւագին, յարեալ կենդանին: Մեռեալն յարեալ ի խաչէն, զոր գերեզման եղին: Մի լար Մարիամ Մագթաղենացի, ես եմ Միածինըն Յիսուս, որ յարեալ ի գերեզմանէն:

Ես եմ Միածինըն Յիսուս որ յարեալ ի գերեզմանէն:

\* \* \*

Ի գերեզման յարուցելոյն անմահին, այսօր գոչէ հրեշտակն երկնային, յարեալ Քրիստոս, զարթեալ Քրիստոս, ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն:

Պահապանքըն զարհուրեցան ի յահէն, քանզի ի կոյս ի նորափոր տապանէն, յարեալ Քրիստոս, զարթեալ Քրիստոս, ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն:

Աւ սուրբ վիմին նստեալ գոչէր հրաշային, իւր շարերքն քարոզելով ծաղկէին, յարեալ Քրիստոս, զարթեալ Քրիստոս, ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն:

ՆՄՏԻԼ

## ԺԱՄԱՄՈՒՏՔ

Կիրակի օրեր

Միածին Որդի եւ Բանդ Աստուած եւ անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ կուսէն. անփոփոխելի մարդ եղեալ, խաչեցար Քրիստոս Աստուած մեր, մահուամբ գմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ երրորդութենէն, փառաւորակից ընդ Հօր եւ Սրբոյ Հոգւոյն, կեցո՛ւ ըզմեզ:

Ծննդեան եւ Աստուածածնի

Աստուածածին անհարսնացեալ, զԲանն անսկիզբըն յղացար եւ զԱստուածն անխմանալի ծընար, զանպարագրելին ի գիրկըս քո բարձեր նրմա անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:

Չատկի

Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ ըզմահ կոխեաց. եւ յարուցեամբն իւրով մեզ ըզկեանըս պարգեւեաց. նրմա փառք յաւիտեանս. ամէն:

Խաչի

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով եւ խնդրեմք ըզթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր ըզդատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժմ վասն սրբոյ աստուածային քո նշանի շնորհեա գերկնային ըզխաղաղութիւնըդ ամենայն աշխարհի:

Արկ. Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք Ընկալ կեցո եւ ողորմեա: Օրհնեա՛ Տէր:

Քհնյ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենացուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Արկ. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Քհնյ. Տէր. Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքննին է եւ փառքդ անհասանելի. որոյ ողորմութիւնդ անչափ է, եւ գթութիւնդ անբաւ:

Գու ըստ առատ մարդամիրութեանդ քում, նայեաց ի ժողովուրդս քո եւ ի տաճարս այս սուրբ: Եւ արա ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր՝ առատապէս զողորմութիւն քո եւ գթութիւն: Զի քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՀԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Յինանց Շարաք եւ Կիրակի օրերուն

Ա.Ձ.

Գովեա Երուսաղէմ ըզՏէր:

Յարեալ Քրիստոս ի մեռելոց, ալէլուիա:

Եկայք ժողովուրդք, երգեցէք Տառն, ալէլուիա:

Յարուցելոյն ի մեռելոց ալէլուիա, որ զաշխարհըս լուսաւորեաց. ալէլուիա:

Յարութեան Կիրակիներուն

Ա.Ձ.

Զթագաւորն փառաց Քրիստոս, որ վասն մեր մարմնացաւ ի սրբոյ կուսէն, եւ խաչի համբերելով. միաբանութեամբ երզով բարեբանեսցուք: Որ ըզթաղումն երեքօրեայ յանձն էառ, յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ. միաբանութեամբ երզով



բարեբանեսցուք: Կարողապէս ըզդրունըն դըժոխոց խորտակեաց, եկեղեցւոյ իւրում զգեցոյց զմեծ վայելութիւն. միաբանութեամբ...:

ԱԿ.

Թագաւորեաց Աստուած ի վերայ Հեթանոսաց, եւ լուսազարդեալ պաշտուացոյց սուրբ զեկեղեցի. ժողովուրդք ըզՔրիստոս բարեբանեցէք: Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած. քանզի շիջոյց զխայթոց մահու խաչիւն իւրով սրբրով. ժողովուրդք ըզՔրիստոս բարեբանեցէք: Յարեաւ Աստուած, եւ տիեզերք ամենայն նորափետուր զարդարեցան, եւ մանկունք Հաղորդեցան մարմնոյ եւ արեան կենարարին. ժողովուրդք ըզՔրիստոս բարեբանեցէք:

ԲԶ.

Թագաւորին յաւիտենից մատուցուք զօրհներգութիւն որ ի կուսէն մարմնացաւ. Հաստատեաց զաշխարհս ի հաւատս անսասանելի. փառք նման այժմ եւ յաւիտեան: Որ կամաւ Համբեր մահու խաչի Աստուած բանն եւ եհեղ զարիւն իւր սուրբ, ի փրկութիւն տիեզերաց. փառք...: Աստուածապէս յարուցեալ ի նորափոր ի վիմէն լուսազարդեաց զեկեղեցի իւր սուրբ, ի փառս եւ ի գովեստ անուան իւրոյ. փառք...:

14

ԲԿ.

Օրհնութիւն ի բարձունս, տնօրինեցելոյն ի կուսէն Թագաւորին մերոյ. ալէլուիա, ալէլուիա: Օրհնութիւն ի բարձունս, անսասանելի եւ Հաստատուն յուսոյն մերոյ. ալէլուիա, ալէլուիա: Օրհնութիւն ի բարձունս, անբաժանելի եւ միասնական Ս. Երրորդութեանն, ալէլուիա, ալէլուիա:

ԳԶ.

ԶԹագաւորն Քրիստոս, օրհնութեամբ երգով բարեբանեցէք ամենայն երկիր: Արարողին երկրնի եւ երկրի, մատուցուք երգով գոհարանութիւն, ամենայն երկիր: Երրորդութեանն եւ մի աստուածութեան մատուցուք պատիւ, երկրրպագութիւն, յաւիտեանս. ամէն:

ԳԿ.

Լուսով աստուածութեան քո Քրիստոս, լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. պահեա ըզսա անշարժ յաւիտեան: Տօնէ այսօր Երուսաղէմ հաւատացելոց բազմութեամբ զնաւակատիս սուրբ եկեղեցւոյ. պահեա ըզսա անշարժ յաւիտեան: Բացան դրունքը հաւատոյ նոր Սիոնի, ընդունիլ զանմահ փեսայդ յառազաստ. բաշխէ զմարմին քո եւ զարիւն. պահեա ըզսա անշարժ յաւիտեան:

15

Թագաւոր Քրիստոս էակից Հօր եւ Հոգւոյն, որ վասն մեր մարմնացար ի սուրբ Կուսէն. Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք: Որ կամաւոր մահուամբ ըզմահ մեռուցեր, եւ անապական յարութեամբըդ քո նորոգեցեր զաշխարհս. Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք: Որ կենդանարար արեամբըդ քո լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. երգեմք քեզ ընդ հրեշտակս ասելով. Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք:

Որ անբաւելի յաղթող գօրութեամբ Թագաւոր ես երկնի եւ երկրի, Քրիստոս Աստուած. օրհնարանեմք ըզքեզ: Որ փառակցութեամբ ընդ Հօր վերօրհնիս յանմահից. եւ խոնարհեալ մարմին ըզգեցար փառաց Թագաւոր. օրհնարանեմք ըզքեզ: Որ կարողապէս ըզմահ կոխեցեր, եւ յարուցեալ լուսաւորեցեր Ս. զեկեղեցի, անմահ էութիւն. օրհնարանեմք զքեզ:

Ծննդեան

Սուրբ զԱստուածածինն օրհնութեամբ մեծա-

ցուցանեմք: Աւետաւոր հրեշտակն աւետարանէր ըզծնեալ Փրկիչն ի սրբոյ Կուսէն: Ասէ ուրախ լըր բերկրեալը, քանզի Տէր տէրանց է ընդ քեզ:

Քննյ. Ձի քո է կարողութիւն, եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Սրկ. Պռօսխումէ:

Դպ. Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ. որ յարեար ի մեռելոց. ողորմեա մեզ:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Սրկ. Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Սրկ. Վասն ամենայն Սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց. զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Սրկ. Վասն Հայրապետին մերոյ Տեառն Տեառն Արամայ Սրբազնագոյն Կաթողիկոսի կենաց, եւ փրկութեան հոգւոյ նորին, զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Յիշեա՛ Տէր եւ ողորմեա:

*Տէր ողորմեա՛:*

*Քեզ, Տեառնդ յանձն եղիցուք:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

Քինյ. *Ձի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գորով, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

### ՆՍՏԻ

Հոս կը կարդացուի Ճաշու Գիրքը:  
Իսկ Աւետարանի ընթերցման պահում՝

### ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻ

Դպ. *Փառք քեզ Տէր Աստուած մեր:*

### ՀԱՒԱՏԱՄՔ

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեսելեաց եւ աներեսութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն յեութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստ-

ուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ո՛չ արարած:

Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեսելիք եւ աներեսոյթք:

Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան, իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն՝ Հոգւովն Սրբով:

Որով էառ մարմին, հոգի եւ միտ եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինքս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր, ի դատել գկեցողանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յԱւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն, ընդհանրական եւ առաքելական Սուրբ Եկեղեցի: Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւնն մեռելոց, ի դա-

տաստանց յաւիտեանից հոգւոց եւ մարմնոց,  
յարքայութիւնն երկնից եւ ի կեանս յաւի-  
տեանականս:

Իսկ որք ասեցն՝ էր երբեմն յորժամ ո՛չ էր  
Որդի՞ն, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր Սուրբ  
Հոգի՞ն, կամ թէ՛ յոչէից եղե՞ն, կամ յայլմէ  
էութեան ասե՞ն լիցե՞լ գՈրդի՞ն Աստուծոյ եւ կամ  
գՍուրբ Հոգի՞ն, եւ թէ՛ փոփոխելիք են կամ  
այլայլելիք, գայճպիսիսն ճգովէ կաթողիկէ եւ  
առաքելական Սուրբ Եկեղեցի:

Քհնյ. Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան  
գյաւիտեանս, երկիրպագանելով Սրբոյ Եր-  
րորդութեան եւ միոյ Աստուածութեան՝ Հօր  
եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ  
եւ յաւիտենից. ամէն:

### ՆՍՏԻԼ

Սրկ. Եւ եւս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Սրկ. Եւ եւս հաւատով աղաչեսցուք եւ խնդրես-  
ցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի Փրկչէն մեր-  
մէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտա-  
ման եւ աղօթից: Զի արժանի ընդունելու-  
թեան արասցէ, լուիցէ Տէր ձայնի աղաչա-  
նաց մերոց: Ընկալցի զխնդրուածս սրտից

մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի  
վերայ մեր: Աղօթք մեր եւ խնդրուածք յա-  
մենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրու-  
թեան նորա: Եւ նա տացէ մեզ միաբան, մի-  
ով հաւատով եւ արդարութեամբ վաստակիլ  
ի գործս բարեաց, զի զողորմութեան զը-  
նորհս իւր արասցէ ի վերայ մեր. Տէրն  
ամենակալ, կեցուսցէ եւ ողորմեսցի:

Դպ. Կեցո Տէր, շնորհեա Տէր (Երիցս կրկնել):

Տէր ողորմեա:

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք,

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմ-  
եա:

Քհնյ. Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհու-  
թեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ Սուրբ  
Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յա-  
ւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Աստուծոյ երկիրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Քհնյ. Խաղաղութեամբ քով Քրիստոս Փրկիչ մեր,  
որ ի վեր է քան զամենայն միտս եւ զքանս,  
ամրացո՛ զմեզ եւ աներկիւղ պահեա՛ յամե-  
նայն չարէ:

Հաւասարեա՛ գմեղ ընդ ճշմարիտ երկրպա-  
գուս քո՝ որք հոգւով եւ ճշմարտութեամբ  
քեզ երկիրպագանեն, վասն զի ամենասուրբ  
Նորորդութեանդ վայելչ փառք, իշխանու-  
թիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտ-  
եանս յաւիտենից:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Արկ. Օրհնեա Տէր:

Քհնյ. Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեան:

Դպ. Ամէն:

Արկ. Մի ոք յերախայից, մի ոք ի թերահաւատից,  
եւ մի ոք յապաշխարողաց եւ յանմաքրից  
մերձեսցի յաստուածային խորհուրդս:

Դպ. Մարմին տէրունական եւ արիւն փրկչական,  
կայ առաջի- երկնային զօրութիւնքն յաներե-  
ւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ բարբա-  
ռով. Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրու-  
թեանց:

Արկ. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում,  
դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ գերգս հոգե-  
ւորս:

ԱՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

## ՍՐԲԱՍԱՅՈՒԹԻՒՆՔ

Ծննդեան, Աւետման, Վարդավառի եւ  
Աստուածածնի

Բազմութիւնք հրեշտակաց եւ զօրաց երկնաւո-  
րաց. իջեալ ի յերկնից ընդ Միածին թագաւորին:  
Որք երգէին եւ ասէին. սա է Որդին Աստուծոյ:  
Ամենեքեան ասասցուք. ուրախ լերուք երկինք եւ  
ցնծասցեն հիմունք աշխարհի: Զի Աստուածն յաւի-  
տենական ի յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան  
չըջեցաւ, զի կեցուցէ զանձինս մեր:

Յինանց եւ Խաչի

Ով է որպէս տէր Աստուած մեր, խաչեցաւ  
վասն մեր, թաղեցաւ, եւ յարեաւ, հաւատարիմ  
եղեւ աշխարհի, եւ համբարձաւ փառօք: Եկայք ժո-  
ղովուրդք, զօրհնութիւն ընդ հրեշտակս երգես-  
ցուք նմա, ասելով. սուրբ, սուրբ, սուրբ ես, Տէր  
Աստուած մեր:

Կիրակէի, Եկեղեցւոյ, Ծաղկապարդի,  
Հրեշտակաց եւ Հոգեգալստեան

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր, Աստ-  
ուած, գքո սուրբ գեկեղեցի: Հազարք հազարաց

հրեշտակապետք կան առաջի քո, եւ բիւրք բիւրուց հրեշտակք պաշտեն զքեզ, Տէր: Եւ ի մարդկանէ Հաճեցար ընդունիլ զօրհնութիւն, ճայնիւ խորհրդականաւ. Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց:

Պատարագիչը կը խոնարհի, կ'առնէ սկիւր սարկաւագի ձեռքէն եւ կը խաչակնքէ ժողովուրդին վրայ:

Արկ. Եւ եւս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Արկ. Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ: Մի խղճիւ եւ գայթակղութեամբ, մինենդութեամբ, խորամանկութեամբ, մի պատրանօք եւ խաբէութեամբ, մի երկմտութեամբ եւ մի թերահաւատութեամբ. այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, լի եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, եւ գտցուք զողորմութեան զչնորհս յաւուր յայտնութեան, եւ ի միւսանգամ գալլատեան Տեառն մերոյ եւ վրկչին Յիսուսի Քրիստոսի. կեցուցէ եւ ողորմեսցի:

Դպ. կեցո՛՛ Տէր եւ ողորմեա՛:

ՔեԱյ. Ծնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր՝ միանգամայն եւ Հոգւոյդ Սրբոյ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպ. Եւ ընդ Հոգւոյդ քում:

Արկ. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Արկ. Ողջոյն տուք միմիանց ի համբոյր սրբութեան, եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ զրունս ելէք եւ աղօթեցէք:

Դպ. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ էնն Աստուած աստ բազմեցաւ. խաղաղութեան ճայնն Հնչեցաւ, սուրբ ողջունի հրաման տուաւ. եկեղեցիս մի անձն եղեւ. համբոյրս յօդ լլրման տուաւ: Թշնամութիւնըն հեռացաւ. սէրն յընդհանուրս սփռեցաւ: Արդ պաշտօնեայք բարձեալ զճայն. տուք զօրհնութիւն ի մի բերան, միասնական աստուածութեանն, որում սրովբէքն են սրբաբան:

Հանդիսաւոր օրեր

Արկ. Որք հաւատով կայք յանդիման սուրբ սեղանոյս արքայական, տեսէք բազմեալ գՔրիստոս արքայն, եւ շուրջ պատեալ զօրք վերնական:

Դպ. Վեր համբառնամք զաչս ունելով, եւ պաղատիմք զայս ասելով. զմեղս մեր մի յիշեսցես, այլ գթութեամբ քո քաւեսցես: Ընդ հրեշտակացն օրհնեմք ըզքեզ, եւ ընդ սրբոց քոց, Տէր, փառք քեզ:

\* \* \*

Արկ. Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարուք կացցուք, եւ նայեցարուք զգուշութեամբ:

Դպ. Առ քեզ, Աստուած:

Արկ. Պատարագ Քրիստոս մատչի անարատ Գառն Աստուծոյ:

Դպ. Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:

Քհնյ. Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան:

Դպ. Ամէն. եւ ընդ հոգւոյդ քում:

Արկ. Զդրուես, զդրուես, ամենայն իմաստու-

թեամբ եւ զգուշութեամբ: Ի վեր ընծայեցուցէք զմիտքս ձեր աստուածային երկիւղիւ:

Դպ. Ունիմք առ քեզ, Տէր ամենակալ:

Արկ. Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ:

Դպ. Արժան եւ իրաւ:

Քհնյ. Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, եւ համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին եւ ասել:

Դպ. Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց. լի են երկինք եւ երկիր փառք քո. օրհնութիւն ի բարձունս. օրհնեալ որ եկիր եւ զայոցդ ես անուամբ Տեառն: Ովսաննա ի բարձունս:

Քհնյ. Առէ՛ք, կերէ՛ք, ԱՅՍ Է ՄԱՐՄԻՆ ԻՄ, որ վասն ձեր եւ բամաց բաշխի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Դպ. Ամէն:

Քհնյ. Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան, ԱՅՍ Է ԱՐԻԻՆ ԻՄ ՆՈՐՈՅ ՈՒՆՏԻ, որ յաղագս ձեր եւ բազմաց հեղանի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Դպ. Ամէն: Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր ի մահ վասն մեր, պարտապան պարտեաց մերոց. հեղմամբ արեան նորա աղաչեմք զքեզ, ողորմեա քո բանաւոր հօտի:

Քհնյ. Եւ զքոյս ի քոյոց՝ քեզ մատուցանեմք ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Դպ. Յամենայնի օրհնեալ ես, Տէր. օրհնեմք զքեզ. զովեմք զքեզ. զոհանամք զքէն. աղաչեմք զքեզ, Տէր Աստուած մեր:

Սրկ. Օրհնեա, Տէր:

Քհնյ. Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ. Առաջի քո, Տէր: Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն հաց կենաց բաշխիս ի մեզ. հեղմամբ արեան քո սուրբ, աղաչեմք զքեզ, ողորմեա՛ արեամբ քով փրկեալ հօտի:

Քհնյ. Որպէսզի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս՝ յանգատապարտութիւն. ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Դպ. Հոգի Աստուծոյ, որ զփառակցի քո զխորհուրդ, իջեալ ի յերկնից կատարես ի ձեռն մեր. հեղմամբ արեան սորա՝ աղաչեմք զքեզ, հանգո՛ զհոգիս մեր ննջեցելոցն:

## ՆՍՏԻԼ

Քհնյ. Ընդ որս եւ մեզ այց արասցես բարերար Աստուած աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Քհնյ. Աստուածածնին Սրբոյ Կուսին Մարիամու. եւ Յովհաննու Մկրտչին, Ստեփանոսի նախավկային եւ ամենայն սրբոց եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս. աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սրկ. Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց եւ ամենայն հայրապետաց սրբոց, առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւազաց, եւ ամենայն սրբոց. եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս. աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սրկ. Օրհնեալ, զովեալ եւ փառաւորեալ, հրաշալի եւ աստուածագարդ յարութեանն (յայտնութեանն, ծննդեանն, դալստեանն, համբարձմանն, տէրութեանն՝ յաւուր պատշաճի) Քրիստոս երկիր պագանեմք:

Դպ. Փառք յարութեան քո Տէր:

Սրկ. Սուրբ եւ աստուածահաճոյ մարգարէին (հայրապետին, առաքելոյն, մարտիրոսին, անուը հոլովուած) որոյ այսօր գլխատակն կատարեցաք, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս. աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմեա:



Սրկ. Առաջնորդացն մերոց եւ առաջին լուսաւորչացն սրբոց Թադէոսի եւ Բարթողոմէոսի առաքելոցն. եւ Գրիգորի Լուսաւորչին, Արիստակիսի, Լրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսիսի, Սահակայ, Դանիէլի եւ Խաչայ. Մեսրոպայ վարդապետին եւ Գրիգորի Նարեկացւոյն, եւ Ներսիսի Կլայեցւոյն. Յովհաննու Որոտնեցւոյն. եւ Գրիգորի եւ Մովսիսի Տաթեւացեացն, եւ սրբոց Գրիգորիսեանց եւ Ներսիսեանց, հովուաց եւ հովուապետացն Հայաստանեայց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս. աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Սրկ. Միանձնացելոց սրբոց, առաքինասէր եւ աստուածուսոյց կրօնաւորացն Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, Ոնոփրիոսի, արքայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսէնի, Եւագրի, Պարսամայ, Յովհաննիսեանց եւ Սիմէոնեանց, սրբոց Ոսկեանց եւ Սուքիասեանց, եւ ամենայն սրբոց հարց եւ աշակերտելոց նոցին ընդ տիեզերս, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս. աղաչեմք:

Դպ. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

Սրկ. Թագաւորաց հաւատացելոց սրբոց Արգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ եւ Թէոդո-

սից, եւ ամենայն սուրբ եւ բարեպաշտ Թագաւորաց եւ աստուածասէր յիշատակ եղիցի ի սուրբ պատարագս. աղաչեմք:

Դպ. Յիշեա, Տէր, եւ ողորմեա:

Սրկ. Ընդհանուր ամենայն հաւատացելոց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, եւ ամենայն չափու հասակի հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոցն. եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

#### ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

Քննչ. Եւս առաւել զԵպիսկոպոսապետն մեր. եւ զպատուական Հայրապետն ամենայն Հայոց՝ Մեծի Տանն Կիլիկիոյ, զՏէր զՏէր ԱՐԱՄ Սրբազնագոյն Կաթողիկոս. եւ վիճակիս բարեխնամ Առաջնորդ զՏէր ..... , շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ:

Սրկ. Գոհութիւն եւ փառարանութիւն մատուցանեմք քեզ, Տէր Աստուած մեր, վասն սուրբ եւ անմահ պատարագիս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս. զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեսցես: Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն եւ զըղձալի զխաղա-

դուժիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց. եպիսկոպոսապետին մերոյ եւ պատուական հայրապետին Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Տեառն Տեառն (անուընդ հոլովուած ձեռով) Սրբազնագոյն Կաթողիկոսի, եւ վիճակիս Առաջնորդ Տեառն (անուընդ հոլովուած ձեռով) սրբազան Եպիսկոպոսի (կամ արքեպիսկոպոսի), եւ քահանայիս որ ըզպատարագս մատուցանէ: Եւ վասն զօրութեանց եւ յաղթութեանց թագաւորաց քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշից: Աղաչեսցուք եւ խնդրեսցուք եւ վասն Հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ ըրբունապետացն մերոց, եւ շինողաց եկեղեցւոյս, եւ որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ: Ազատութիւն եղբարց մերոց գերելոց եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս: Հանգիստ հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն. եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս. աղաչեմք:

Դպ. Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Քհնյ. Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ Փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ ձեզ ընդ ամենեսեան:

Դպ. Ամէն. եւ ընդ Հոգւոյդ քում:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր, ողորմեա:

Սրկ. Ամենայն սրբովք, զորս յիշատակեցաք եւս առաւելապէս, զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր, ողորմեա:

Սրկ. Վասն մատուցեալ սուրբ եւ աստուածային անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր, ողորմեա:

Սրկ. Որպէս զի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա ի սուրբ, յերկնային եւ յիմանալի իւր մատուցարանն, զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս եւ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր, ողորմեա:

Սրկ. Ընկալ, կեցո եւ ողորմեա, եւ պահեա զմեզ, Տէր, քոյին շնորհիւդ:

Դպ. Կեցո, Տէր, եւ ողորմեա:

Սրկ. Չամենասրբուհի զԱստուածածինն զմիշտ կոյն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով. զՏէր աղաչեսցուք:

Դպ. Յիշեա, Տէր, եւ ողորմեա: Տէր ողորմեա: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք: Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

- Քհնյ. Եւ տուր մեզ համարձակածայն բարբառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:
- Դպ. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեացէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ, տուր մեզ այսօր, թող մեզ ըզպարտիս մեր, որպէս եւ մեք թողուք մերոց պարտապանաց, եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէն:
- Քհնյ. Զի քո է արքայութիւն եւ գորութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն: Նաղաղութիւն ամենեցուն:
- Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:
- Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք:
- Դպ. Առաջի քո, Տէր:
- Քհնյ. Քրիստոսիւ Յիսուսիւ Տէրամբ մերով. ընդ որում քեզ Հոգւոյդ Սրբոյ եւ Հօր ամենակալի վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:
- Սրկ. Պոսիտումէ:
- Քհնյ. Ի սրբութիւն սրբոց:

- Դպ. Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր. ամէն:
- Քհնյ. Օրհնեալ Հայր Սուրբ Աստուած ճշմարիտ:
- Դպ. Ամէն:
- Քհնյ. Օրհնեալ Որդիդ Սուրբ Աստուած ճշմարիտ:
- Դպ. Ամէն:
- Քհնյ. Օրհնեալ Հոգիդ Սուրբ Աստուած ճշմարիտ:
- Դպ. Ամէն:
- Քհնյ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:
- Դպ. Ամէն: Հայր Սուրբ, Որդիդ Սուրբ, Հոգիդ Սուրբ: Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:
- Քհնյ. Ի սուրբ, ի սուրբ պատուական Մարմնոյ եւ յԱրեւել Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի. ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում: Սա է Կեանք, Յոյս, Յարութիւն, Քաւութիւն եւ Թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում: Սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերում անմահի, որ նստի ի կեառս քերովբէականս:

ՆՍՏԻԼ

## ՉՂՋՈՒՄՆ

1.- Մեղայ ամենասուրբ Երրորդութեանն՝  
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Մեղուցեալ  
եմ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ  
եւ սրբուհւոյ Աստուածածնին, եւ առաջի քո,  
հա՛յր սուրբ, զամենայն մեղս զոր գործեալ եմ:  
Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով,  
կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտու-  
թեամբ, մեղայ Աստուծոյ:

2.- Մեղայ հոգւովս եւ զօրութեամբ սորա,  
մտօքս եւ շարժմամբ սորա, մարմնովս եւ զգա-  
յութեամբ սորա:

ա/ Մեղայ զօրութեամբ հոգւոյս. խորամանկու-  
թեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ  
եւ երկչոտութեամբ, շռայլութեամբ եւ ժլա-  
տութեամբ, գեղխութեամբ եւ անիրաւու-  
թեամբ. չարահաւանութեամբ, յուսահատու-  
թեամբ, եւ թերամտութեամբ, մեղայ Աստու-  
ծոյ:

բ/ Մեղայ չար խորհրդով մտացս. նենգու-  
թեամբ, ատելութեամբ, խեթիւ, մախանօք,  
յաչաղանօք, թուլութեամբ, պողնկական  
խորհրդով, արուական, իգական անասնա-  
կան, գրաստական, գազանական, ի գիշերի  
եւ ի տուրնջեան. երազական գիշութեամբ,  
եւ անըջական գարշ աղտեղութեամբ, մեղայ  
Աստուծոյ:

գ/ Մեղայ ցանկութեամբ մարմնոյս. հեշտու-  
թեամբ, պղերգութեամբ, յօրանջմամբ քնոյ,  
շարժութեամբ մարմնոյս, եւ զագրագործու-  
թեամբ ի պէս պէս ախտս. հեշտալրութեամբ  
լսելեացս, արատութեամբ աչացս, ցանկու-  
թեամբ սրտիս, իգութեամբ ռնգացս, պագշո-  
տութեամբ բերանոյս. անժուժկալութեամբ,  
շուայտութեամբ, եւ արբեցութեամբ, մեղայ  
Աստուծոյ:

3.- Մեղայ չարաբանութեամբ լեզուիս. ստա-  
խօսութեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցու-  
թեամբ, հակառակութեամբ, վիճաբանութեամբ,  
բանասարկութեամբ, շոգմոգութեամբ, քսու,  
դատարկարանութեամբ, եւ ծաղու, զրախօսու-  
թեամբ, հերձախօսութեամբ, եւ անիծաբանու-  
թեամբ. տրտնջելով, դժգոհելով, բամբասելով,  
եւ հայհոյելով, մեղայ Աստուծոյ:

4.- Մեղայ գողութեամբ ձեռացս. ագահելով,  
զրկելով, հարկանելով, սպանանելով, եւ ընդ  
քարշս ածելով, մեղայ Աստուծոյ:

5.- Մեղայ ամենայն յօդուածովք շինուածոյս  
եւ ամենայն անդամօք մարմնոյս. հնգեակ զգա-  
յարանօքս, եւ վեցեկի շարժմամբս.

Վերամբարձ ոտնահարութեամբ, եւ վայրա-  
քարշ մեղկութեամբ. յաջ եւ յահեակ խոտորե-  
լով, առաջնոցն մեղանչելով, եւ վերջնոցն չար  
նշաւակ գոլով, մեղայ Աստուծոյ:

6.- Այլ եւ մեղայ եօթնիցս յանցանօք՝ մահա-  
ցու մեղօք.- հպարտութեամբ՝ եւ մասամբք նո-  
րին. նախանձու՝ եւ մասամբք նորին. բարկու-  
թեամբ՝ եւ մասամբք նորին. ծուլութեամբ՝ եւ  
մասամբք նորին. ագահութեամբ՝ եւ մասամբք  
նորին. որկրամոլութեամբ՝ եւ մասամբք նորին.  
քղջախոհութեամբ՝ եւ մասամբք նորին. մեղայ  
Աստուծոյ:

7.- Այլ եւ մեղայ ամենայն պատուիրանացն  
Աստուծոյ, յանձնառելեացն եւ հրաժարելեացն.  
զի ոչ զյանձնառականսն կատարեցի, եւ ոչ ի  
հրաժարելեացն հեռացայ: Ջօրէնս առի՝ եւ յօ-  
րինացն հեղգացայ. ի կարգս քրիստոնէութեան  
հրաւիրեցայ՝ եւ գործովս անարժան գտայ. զի-  
տելով զչարն կամաւ կորացայ, եւ ի բարեաց  
գործոց ես ինձէն հեռացայ. վա՛յ ինձ, վա՛յ  
ինձ, վա՛յ ինձ: Ջո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստո-  
վանիմ. զի անթիւ եմ յանցանք իմ. անասելի եմ  
անօրէնութիւնք իմ. աններելի եմ ցաւք իմ, եւ  
անբժշկելի եմ վերք իմ, մեղայ Աստուծոյ:

8.- Հայր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշ-  
տութեան եւ բարեխօս առ միածին Որդին Աս-  
տուծոյ, զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ,  
արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց, աղա-  
չեմ զքեզ:

## ԱՐՉԱԿՈՒՄՆ

Տէր, ողորմեա , Տէր, ողորմեա , Տէր,  
ողորմեա :

Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած, եւ  
թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց  
քոց, խոստովանացելոցն եւ մոռացելոցն: Եւ ես  
կարգաւս քահանայական իշխանութեան, եւ  
հրամանաւն աստուածային՝ թէ Ջոր արձակի-  
ցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս, նովին  
բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցու-  
թեանէ մեղաց քոց. ի խորհրդոց՝ ի բանից՝ եւ ի  
գործոց. յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
Սրբոյ: Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդս  
սուրբ եկեղեցւոյ. զի զոր ինչ գործիցես բարիս,  
եղիցի քեզ ի բարեգործութիւն եւ ի փառս հան-  
դերձեալ կենացն. ամէն:

Դպ. *Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Տէր ողորմեա:*

Դպ. *Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխար-  
հիս խաղաղութիւն:*

Սրկ. *Եւ հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքա-  
յութիւն:*

կամ

Դպ. *Արի Աստուած հարցրն մերոց, որ ապաւէնդ  
ես նեղելոց:*

- Սրկ. Հաս յօգնութիւն ծառայից քոց, լիւր օգնականն ազգիս հայոց:
- Դպ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:
- Սրկ. Միջնորդութեամբ սուրբ եւ անմահ պատարագիս:
- Դպ. Ընկալ Տէր, եւ ողորմեա:
- Սրկ. Սաղմոս ասացէք, Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ գերգա հոգեւորս: Ձի սմա վայել են սաղմոսք եւ օրհնութիւնք, ալելուք եւ երգք հոգեւորք: Պաշտօնեայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէք, եւ զՏէր յերկինս օրհնեցէք:

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻՒ

- Դպ. Օրհնեալ է Աստուած. Գրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. ալելուիա:  
Չմարմին իւր տայ մեզ կերակուր եւ սուրբ զարին իւր ցօղէ ի մեզ. ալելուիա:  
Մատիք առ տէր, եւ առէք զլոյս ալելուիա:  
Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր. ալելուիա:  
Օրհնեցէք զՏէր յերկինս. ալելուիա:  
Օրհնեցէք զնա ի բարձունս. ալելուիա:  
Օրհնեցէք զնա, ամենայն հրեշտակք նորա. ալելուիա:

Օրհնեցէք զնա, ամենայն զօրութիւնք նորա. ալելուիա:

- Սրկ. Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք:
- Դպ. Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:
- Քիմյ. Կեցո, Տէր, զժողովուրդս քո, եւ օրհնեա՛ զժառանգութիւնս քո, հովուեա՛ եւ բարձրացո՛ զսոսա յայսմ հետէ մինչեւ յաւիտեան:

ՆՍՏԻ

- Դպ. Լցաք ի բարութեանց քոց, Տէր, ճաշակելով ըզմարմին քո եւ զարին. փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ: Որ եւ հանապազ կերակրես զմեզ. առաքեա ի մեզ զհոգեւոր քո զօրհնութիւն. փառք ի բարձունս կերակրողիդ ըզմեզ:
- Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
- Դպ. Տէր, ողորմեա:
- Սրկ. Եւ եւս հաւատով ընկալեալք յաստուածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ եւ անապական խորհրդոյս, զՏեառնէ գոհացարուք:
- Դպ. Գոհանամք զքէն, Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քո: Բաշխելով զմար-

մինդ եւ զարիւնդ ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

Քհնյ. Որ օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն զքեզ Տէ՛ր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ:

Դպ. Օրհնեալ է Աստուած:

Քհնյ. Կեցո զժողովուրդս քո եւ օրհնեա՛ զժառանգութիւն քո, զյրումն եկեղեցւոյ քո պահես:

Դպ. Ամէն:

Քհնյ. Սրբեա զսոսա որք ողջունեցին սիրով զվայելութիւն տան քո: Դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով, եւ մի՛ թողուր զյուսացեալս ի քեզ:

Դպ. Ամէն:

Քհնյ. Զխաղաղութիւն պարգեւեա՛ ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, (Հայրապետութեամբ եւ Հանրապետութեամբ Ազգիս Հայոց) եւ զինւորեալ մանկանց մերոց եւ ամենայն ժողովրդեանս:

Դպ. Ամէն:

Քհնյ. Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալք

առ ի քէն. որ ես Հայր լուսոյ, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպ. Ամէն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայմհետէ մինչեւ յաւիտեան. եղիցի անուն Տեառն օրհնեալ յայմհետէ մինչեւ յաւիտեան. եւ եղիցի անուն Տեառն օրհնեալ յայմհետէ մինչեւ յաւիտեան:

Քհնյ. Կատարումն օրինաց եւ մարգարէից՝ դո՛ւ ես Քրիստոս Աստուած փրկիչ մեր, որ լցեր զամենայն հայրակամ տնօրէնութիւնս քո, լից եւ զմեզ Հոգւովդ քով սրբով:

Սրկ. Օրթի:

Քհնյ. Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Երկիւղածութեամբ լուարուք:

Քհնյ. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու (1.1-14):

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սրկ. Պռօսխումէ:

Դպ. Ասէ Աստուած:

Քահանան կը կարդայ Աւետարանը

Սրկ. Փառք քեզ Տէր Աստուած մեր: Սուրբ Խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ

չնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ  
Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քննյ. Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց Քրիստոս  
Աստուած մեր, պահեա՛, պահպանեա՛ եւ օրհ-  
նեա՛, զազգս Հայոց, զեկեղեցիս Հայաստան-  
եայց եւ համախմբեալ հաւատացեալ զժողո-  
վուրդս քո ընդ հովանեաւ սուրբ եւ պատ-  
ուական խաչիւդ քո ի խաղաղութեան-  
փրկեա՛, ազատեա՛, յերեւելի եւ յաներեւոյթ  
թշնամուոյն, արժանաւորեա՛ գոհութեամբ  
փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ  
Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-  
տենից. ամէն:

Սրկ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն  
ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Քննյ. Օրհնեալ եղերուք ի շնորհաց Սրբոյ Հոգ-  
ւոյն, երթայք խաղաղութեամբ, եւ Տէր Յի-  
սուս եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ.  
ամէն:

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

ՀՈԳԵԱՆԳՍԵԱՆ ՊԱՇՏՕՆ

Շարական ԲԿ.

Որ յանէից ստեղծող գոյից արարչակից Հօր  
Բանդ Աստուած, թողութիւն շնորհեա ննջեցելոց

քոց ծառայից. յորժամ դաս դատել զոր անարատ  
ձեռօք ստեղծեր:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Որ պսակիչդ ես քոց սրբոց, եւ անվախճան  
բարեաց բաշխող, թողութիւն...:

Սաղմոս

Ալէլուիա, ալէլուիա:

— Ի խորոց կարգացի առ քեզ, Տէր, Տէր, լուր  
ձայնի իմում:

— Եղիցին ականջք քո ի լըսել զձայն աղօթից  
իմոց:

Կամ

Շարական Դ.Ձ.

Գթա Տէր ի հոգիս մեր ննջեցելոցն եւ յիշեա  
ողորմութեամբ. քանզի գինք սուրբ արեան քո են.  
Ի յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռ-  
եալքն եւ կան առաջի ահաւոր քո բեմին:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ  
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ջլուսաւորեալքս ծննդեամբ սուրբ աւագանին  
մի՛ բարկութեամբ խրատեր, եւ մի՛ սրտամոռ-  
թեամբդ քո յանդիմաներ. ի յորժամ հրաշալի...:



## Սաղմոս

Ալէլուիա, ալէլուիա:

— Մերձեցի՛ն խնդրուածք իմ առաջի քո, Տէր,  
ըստ բանի քում իմաստունն արա զիս:

— Մտցեն աղօթք իմ առաջի քո, Տէր, եւ բանիւ  
քով փրկեա զիս:

Աւետարան կը կարդացուի եւ ապա

Երգ Ներսիսի Ենորհալուոյն

Ժողովեալքս ի հրաժարումն ծառայի քո յաշ-  
խարհէ. հայցեմք ի քէն արտասուելով եւ պաղա-  
տիմք զայս ասելով. ճանապարհ ընդ քեզ կից նըն-  
ջեցելոյս լեր ուղեկից. ի յօթեւանս Հօր քո լուսոյ  
ըզնջեցեալս մեր հանգո:

Կամ

Քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի քէն Տէր  
բարեգութ. ընդ նընջեցեալսն հաւատով ընկալ ըզ-  
մեզ նովին յուսով. յՆրուսաղէմ քաղաք վերին յո-  
րում արդարքն ժողովին. փառս վերերգել միշտ  
ընդ նոսին Երրորդութեանդ երրեակ անձին:

Ապա

Ի վերին Երուսաղէմ ի բնակարանս հրեշտա-

կաց. ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղաւ-  
նակերպ, ի դրախտին եղեմական պայծառացեալ  
արժանապէս. ողորմած Տէր, ողորմեա՛ հոգւոցըն  
մեր ննջեցելոց:

Կամ

Ահեղ խորհուրդ քահանային բազկատարած  
կայ ի բեմին. առաջի սուրբ սեղանոյն հուր շիջանի  
խաւար մերժի. տրամեալ հոգիքն ուրախանան՝ զի  
թողութիւն մեղաց լինի. ողորմած Տէր, ողորմեա՛  
հոգւոցն մեր ննջեցելոց:

Մաղթանք

Հոգւոցն հանգուցելոց, Քրիստոս Աստուած,  
արա հանգիստ եւ ողորմութիւն. եւ մեզ մեղաւո-  
րացս՝ շնորհեա զթողութիւն յանցանաց:

Քարոյ

Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք.  
Վասն հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զՓրկիչն  
մեր Քրիստոս՝ զի գնոսա ընդ արդարսն դասեացէ.  
եւ զմեզ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ.  
Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

## Աղօթք

Քրիստոս Որդի Աստուծոյ, անոխակալ եւ բարեգութ, դժա քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց: Յիշեա (անունները) յաւուր մեծի գալստեան արքայութեան քո: Արա արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց: Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն: Ձի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց: Եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

## ԱՂՕԹՔ

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեացէ արքայութիւն քո. եղիցի կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի: Ջհաց մեր հանպագորդ, տո՛ւր մեզ այսօր, եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն: Ջի Ջո է արքայութիւն եւ գօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

